Հավելված 4

<<Հայաէրոնավիգացիա>> փակ բաժնետիրական ընկերության

Խորհրդի 25.04.2023թ.-ի նիստի թիվ 2/23 արձանագրության

Ա.Ավանեսյան

Հավելված 1 - Կորպորատիվ Կառավարման Հայտարարագիր– Նկարագրական մաս

Ընկերության անվանում	«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերություն
Հասցե	ՀՀ, ք.Երևան, Իսահակ Գասպարյան հ.33
Ինտերնետային կայք	www.armats.am

1. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

«Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որի բաժնետոմսերը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը: Պետական բաժնեմասի կառավարման լիազորությունները վերապահված են ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին:

Ընկերությունը իրականացնում է Օդային երթևեկության կազմակերպում (սպասարկում), Աերոնավիգացիոն կապ և դիտարկում, Աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայության մատուցում (թույլտվությունը տրվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2014 թվականի մարտի 21-ի 85-Ա հրամանով):

01.01.2012թ.-ից Ընկերությունը ընդունել է ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագիրքը (հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշմամբ):

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, խորհուրդը և գործադիր մարմիններն իրականացրել են իրենց գործառույթները:

2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն Ընկերության կանոնադրության և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով,

բ) Խորհուրդ,

գ) Գլխավոր տնօրեն

Ընկերության միակ բաժնետերն է Հայաստանի Հանրապետությունը: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2601880000 (երկու միլիարդ վեց հարյուր մեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը կազմում է 260188 (երկու հարյուր վաթսուն հազար հարյուր ութսունութ) սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10000 (տաս հազար) ՀՀ դրամ:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

1. Հաշվետու տարում գումարվել են Տարեկան ընդհանուր ժողով: Տարեկան ընդհանուր ժողովը գումարվել է Ընկերության գլխամասային գրասենյակում (ՀՀ, ք.Երևան, Իսահակ Գասպարյան հ.33):
2. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ տարեկան ընդհանուր ժողովը գումարվել է 24.06.2022թ.-ին:
3. ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը ԲԸԺ-ի մասին ծանուցման Կանոնագրքով սահմանված կարգը չի գործում, քանի որ Ընկերությունն ունի մեկ բաժնետեր:
4. Բաժնետերերը հնարավորություն են ունեցել ԲԸԺ-ին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով: Ներկայացուցչի լիազորությունները Ընկերության Կանոնադրության 1.1 հոդվածով սահմանված կարգով, հասանելի են բաժնետերերին:
5. Կումուլյատիվ քվեարկություն չի իրականացվել, որովհետև Բաժնետերը մեկն է:
6. Տարեկան ԲԸԺ-ի օրակարգը, լիազորագրի ձևը, քվեարկության արդյունքները և նիստի արձանագրությունը հասանելի չեն եղել Ընկերության ինտերնետային կայքում:

4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհրդի գործառույթները

Կանոնագրքի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության 8.3.7 և 8.3.8 հոդվածները սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները:

Խորհրդի կազմը

31.12.2022թ. դրությամբ Ընկերության Խորհուրդը բաղկացած է 7 անդամից,

ԽՈՐՀՈՒՐԴ				
Պաշտոնը և անունը	**Գործադիր**	**Ոչ գործադիր**	**Անկախ**	**Խորհրդի անդամ է սկսած՝**
1. Նախագահ՝ Ա.Ավանեսյան			անկախ	12.12.2018թ.
2. Անդամ՝ Ս.Կոշեցյան		ոչ գործադիր		12.12.2018թ.
3. Անդամ՝ Ա.Գասպարյան	գործադիր			12.12.2018թ
4. Անդամ՝ Ա.Թունյան	գործադիր			07.03.2019թ
5. Անդամ՝ Հ.Գասպարյան		ոչ գործադիր		12.12.2018թ
6. Անդամ՝ Ա.Աղազարյան			անկախ	12.12.2018թ

7. Անդամ՝ Կ.Վերմիշյան		ոչ գործադիր		07.03.2019թ

Նախագահ՝ Արմեն Ավանեսյան
Ծնված 03.04.1963թ. անկուսակցական

1981-1986 ՌԴ Մոսկվայի Կառավարման Պետական Համալսարանի «Կառավարման կազմակերպում տրանսպորտում», որակավորում՝ ինժեներ-տնտեսագետ արտադրության կառավարման գծով:

1997-2013 Որակավորված աուդիտոր (ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից տրված No.No.081, 065 վկայականներ)

06/2018 – մինչ հիմա «ԿԻՊՈՒ Քնսալթինգ» ՍՊԸ-ի Փոխտնօրեն
11/2017 – 05/2018 «Նոկիա Սըլուշնս ընդ Նեթվորքս» ՓԲԸ-ի Ֆինանսական ղեկավար
07/2013 – 10/2017 «Ալկատել-Լյուսենտ Ուկրաինա» ԷսՍի-ի Հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
01/2005 – 06/2013 «Ալկատել-Լյուսենտ Թրեյդ Ինթերնեյշնլ» ԷյՋի ընկերության ներկայացուցչության Ֆինասական ղեկավար
11/1999 – 12/2004 «Ալկատել-Լյուսենտ Թրեյդ Ինթերնեյշնլ» ԷյՋի ընկ. ներկ. հաշվապահ
01/1999 – 12/2000 «Աուդիտ-Զարգացման Ծրագրեր» ՍՊԸ-ի տնօրեն

08/1996 – 12/1998 «Հայագրոբանկ» ԲԲԸ-ի Հաճախորդների սպասարկման կազմակերպման բաժնի պետ
04/1993 – 07/1996 «Արարատ» ՖԱ-ի գլխավոր հաշվապահ
08/1992 – 03/1993 «Կոնկորդ» ՍՊԸ-ի փոխտնօրեն
08/1991 – 07/1992 Հ.Մեղապարտի անվ. Պոլիգրաֆ արտադրական միավորման բեռնատար ԱՏՁ-ի տնօրենի տեղակալ էկոնոմիկայի և կոմերցիայի գծով
01/1987 – 07/1991 «Հայուղևորտրանս» տրեստի ենթակա ԱՏՁ տնտեսագիտական բաժնի պետ
08/1986 – 12/1986 «Հայուղևորտրանս» տրեստի տնտեսագետ

Խորհրդի անդամ՝ Սուրեն Կոշեցյան
Ծնված 08.05.1956թ. անկուսակցական
Կրթություն

1973-1978թթ.-ավարտել է Երևանի Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ մաթեմատիկոսի որակավորմամբ:

1976-1978թթ.-Երևանի Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանակիր պետական համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետում ստացել է իրավագետի հասարակական մասնագիտություն:

1982-1985-ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Կառավարման հիմնախնդիրների ինստիտուտի ասպիրանտուրա, տեխնիկական գիտությունների թեկնածու,դոցենտ

11.06.2018թ.-ից - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի քարտուղարության պետ:
05.02.2018թ.-ից - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի քարտուղարության պետի Ժ/Պ
26.10.2011թ.-ից - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի խորհրդական
2007-2011 - ՀՀ տարածքային կառավարման նախարարության ինֆոտեխնոլոգիաների, տվյալների բազաների և կապի վարչության պետ
2002-2006 - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար
1996-2002 - Երևանի քաղաքապետարան նամակների և քաղաքացիների ընդունելության բաժնի պետ, գործերի կառավարման վարչության պետ, Երևանի քաղաքապետարանի քարտուղար
1992-1996 - Երքաղխորհրդի գործկոմի նախագահի խորհրդական, վերահսկողության տեսչության առաջին կարգի մասնագետ, քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վերահսկողության բաժնի պետ
1992 - Երքաղխորհրդի գործկոմի քաղաքի կառավարման ավտոմատացված համակարգերի կենտրոն, փոխտնօրեն
1988-1992 - Խ.Աբովյանի անվ. Հայկական մանկավարժական ինստիտուտ, դասախոս
1979-1988 - Երքաղխորհրդի գործկոմի քաղաքի կառավարման ավտոմատացված համակարգերի Երևանի Գ/Հ նախագծային ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող, ավագ գիտաշխատող, լաբորատորիայի վարիչ
1978-1979 - Երքաղխորհրդի գործկոմի կառավարման համակարգերի կենտրոնական Գ/Հ լաբորատորիա, ինժեներ

Խորհրդի անդամ՝ Արթուր Գասպարյան
Ծնված 22.07.1963թ. անկուսակցական

1980-1984թթ. Լենինգրադի քաղաքացիական ավիացիայի ակադեմիա, որակավորումը՝ երթևեկության կառավարման ինժեներ

2013թ –ից «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ գլխավոր տնօրեն
2011-2013թթ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ օդային երթևեկության սպասարկման տնօրեն
2010թ. ՕԵԿ կենտրոնի պետ
2006թ «Երևան» ՕԵՍ ծառայության պետ
2002թ. ՕԵԿ կենտրոնի պետ
1999թ. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ ՕԵՍ արարողակարգերի մշակման և ներդրման բաժնի պետ
1998թ. թռիչքների ղեկավարի արտականություններ 1991թ հերթափոխի ավագ կարգավար
1984թ. «Զվարթնոց» օդանավակայանում, որպես օդային երթևեկության կառավարման կարգավար

Խորհրդի անդամ՝ Արամ Թունյան
Ծնված 08.12.1968թ. անկուսակցական
Արամ Արշակի ԹՈՒՆՅԱՆ

Ծնվել է 08.12.1968թ ք. Երևանում: 1975թ ընդունվել և 1985թ ավարտել է Ա. Իսահակյանի անվան №16 միջնակարգ դպրոցը: 1986թ ընդունվել և 1992թ ավարտել է Կիրովոգրադի բարձրագույն թռիչքային ուսումնարանի Օդային Երթևեկության Կառավարման ֆակուլտետը: 1992թ անցել է աշխատանքի <<Զվարթնոց>> օդանավակայանի ՕԵԿ ծառայությունում որպես ՕԵՍ կարգավար: 2004թ նշանակվել է <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերության թռիչքների անվտանգության բաժնի պետի պաշտոնում և մինչ այժմ զբաղեցնում է այդ պաշտոնը:

2012-2017թթ եղել է ՀՀ ներկայացուցիչը Եվրոկոնտրոլ կազմակերպությունում:

Ամուսնացած է՝ ունի երկու դուստր և մեկ զավակ:

1986-1992թթ. Կիրովոգրադի բարձրագույն թռիչքային ուսումնարանի Օդային Երթևեկության Կառավարման ֆակուլտետը:
1992թ <<Զվարթնոց>> օդանավակայանի ՕԵԿ ծառայությունում որպես ՕԵՍ կարգավար:
2004թ նշանակվել է <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերության թռիչքների անվտանգության բաժնի պետի պաշտոնում և մինչ այժմ զբաղեցնում է այդ պաշտոնը:

Խորհրդի անդամ՝ Հայսեր Գասպարյան
Ծնված 13.10.1976թ. **անկուսակցական**

2018-2019թթ. ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ, ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետի պաշտոնակատար-գլխավոր հաշվապահ, 2019թ. մարտից նաև ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող,

2014-2018թթ. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցների ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ (վերակազմավորմամբ պայմանավորված),

2011-2014թթ. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցների ֆինանսական ծրագրավորման վարչության պետ,

2003-2010թթ. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ճյուղային տնտեսական ծրագրերի վարչության, հանրային ծառայությունների ոլորտների ծրագրերի վարչության, ջրային տնտեսության

ծրագրերի, տրանսպորտի և հաղորդակցության ծրագրերի բաժինների պետի տեղակալ, այնուհետև բաժինների պետ,

2002-2003թ. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ծրագրավորման մեթոդոլոգիայի և կազմակերպման բաժնի պետ,

1999-2002թ. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի առաջատար մասնագետ, այնուհետև գլխավոր մասնագետ,

1999-2018թթ.՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դասախոս (համատեղությամբ), ավարտական թեզերի պաշտպանության հանձնաժողովների նախագահ,

1998-2001թ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ասպիրանտուրա.

1993-1998թթ.- բարձրագույն, Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտ (ներկայումս՝ ՀՊՏՀ), Ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետ,

Խորհրդի անդամ՝ Անաստաս Աղազարյան
***Ծնված* 21.08.1970, անկուսակցական**

2014թ. սեպտեմբեր - մինչ օրս - ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտ
Մասնագետ, «Առողջապահության տնտեսության և առողջապահության ազգային հաշիվների կենտրոն»
2013թ. հոկտեմբեր - մինչ օրս - Հայաստանում ֆրանսիական համալսարան
Կառավարման և ֆինանսների ֆակուլտետների դեկան
2005թ. փետրվար - մինչ օրս - Հայաստանում ֆրանսիական համալսարան, Երևան

Դոցենտ / Միկրոէկոնոմիկա, մակրոտնտեսագիտություն, ՀՀ տնտեսություն /
2012թ. օգոստոս - 2013թ. հոկտեմբեր - ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
Նախագահի խորհրդական
2006թ. հուլիս - 2012թ. հուլիս - ՀՀ Վիճակագրության պետական խորհուրդ (ՀՀ Նախագահի աշխատակազմ),
Վիճակագրության պետական խորհրդի անդամ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի համակարգող, տարածաշրջանային վիճակագրական կառավարման պատասխանատու
1999թ. հունվար - 2006թ. հուլիս - ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
Նախագահի օգնական,
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի քարտուղար,
2004թ. մայիս - 2006թ. հուլիս - ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ ԱՎԾ մամուլի քարտուղար
2005թ. սեպտեմբեր - 2013 թ. սեպտեմբեր - Եվրոպական տարածաշրջանային ակադեմիա Հայաստանում, Երևան
Դասախոս / Տնտեսագիտություն, վիճակագրություն, Ազգային հաշիվների համակարգ, Բիզնես վիճակագրություն /

Խորհրդի անդամ՝ Կարեն Վերմիշյան
Ծնված 23.08.1968թ. անկուսակցական

1992թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը

1993-1999թթ. ՀՀ ՊՆ կադրերի վարչություն, սպա, ավագ սպա, բաժանմունքի պետ

1999-2001թթ. ՀՀ ՆԳՆ կադրերի գլխավոր վարչության ավագ տեսուչ

2001-2003թթ. ՀՀ ՆԳՆ Ներքին զորքերի կադրերի բաժնի սպա

2003-2008թթ. ՀՀ ոստիկանության զորքերի կադրերի բաժնի պետի տեղակալ

2008-2011թթ. ՀՀ ոստիկանության զորքերի կադրերի բաժնի պետ

2011-2016թթ. . ՀՀ ոստիկանության կադրերի վարչության հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչ

2019-2018թթ ՀՀ ոստիկանության կադրերի վարչության ՔՀԾ անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ

2018թ. ՔԱԿ անձնակազմի կառավարման բաժնի պետ

2022թ. ընթացքում Խորհուրդը գումարել է 4 նիստ:

Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը.

Պաշտոն և անուն	Նիստերին մասնակցությունը անձամբ	Նիստերին մասնակցությունը հեռակա կարգով	Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր
1. Նախագահ՝ Ա.Ավանեսյան	4	—	4
2. Անդամ՝ Ս.Կոշեցյան	0	—	0
3. Անդամ՝ Ա.Գասպարյան	4	—	4
4. Անդամ՝ Ա.Թունյան	2	—	2
5. Անդամ՝ Հ.Գասպարյան	4	—	4
6. Անդամ՝ Ա.Աղազարյան	1	—	1
7. Անդամ՝ Կ.Վերմիշյան	4	_	4

Խորհրդի աշխատանքի գնահատումը

Խորհուրդը առայժմ չի ընդունել գնահատման քաղաքականություն:

5. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:

6. ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Գլխավոր տնօրեն՝ Արթուր Գասպարյան

22/07/1963թ.

1980-1984թթ. Լենինգրադի քաղաքացիական ավիացիայի ակադեմիա, որակավորումը՝ երթևեկության կառավարման ինժեներ

2013թ –ից «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ գլխավոր տնօրեն
2011-2013թթ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ օդային երթևեկության սպասարկման տնօրեն
2010թ. ՕԵԿ կենտրոնի պետ
2006թ «Երևան» ՕԵՍ ծառայության պետ
2002թ. ՕԵԿ կենտրոնի պետ
1999թ. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ ՕԵՍ արարողակարգերի մշակման և ներդրման բաժնի պետ
1998թ. թռիչքների ղեկավարի պարտականություններ
1991թ հերթափոխի ավագ կարգավար
1984թ. «Զվարթնոց» օդանավակայանում, որպես օդային երթևեկության կառավարման կարգավար

7. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ներքին աուդիտի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են “Ներքին աուդիտի մասին” ՀՀ օրենքով:

8. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերության կորպորատիվ քարտուղարն է Գայանե Մարկոսյանը, որը նշանակվել է Խորհրդի 14.12.2018թ. որոշմամբ:

Ընկերության կորպորատիվ քարտուղարը իր գործառույթներն իրականացնում է համաձայն Կանոնագրքի 22-րդ հոդվածի:

9. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձ է նշանակվել «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն, որն արտաքին աուդիտն իրականացնող անձի պարտականություններն իրականացնում է 16.02.2023թ.ից:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան հաշվետվությունը հաստատվել է Բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Ստորագրված է

Խորհրդի նախագահ_____ Ս.Ավանեսյան

Գլխավոր տնօրեն _____ Ա.Գասպարյան

Հավելված 2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ – «Հետևիր կամ բացատրիր»

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի (ԲԸԺ) իրավասությունները և բաժնետերերի իրավունքները			
1.	Ընկերության կանոնադրությունը նախատեսում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը:	ոչ	Ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է:
2.	3. ԲԸԺ-ի օրակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը բաժնետերերը ստացել են ԲԸԺ-ից առնվազն 21 օր առաջ:	ոչ	Կանոնագքրի գլուխ 1, կետ 2, պարբերություն 2-ի համաձայն մեկ բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում ԲԸԺ-ի գումարման և օրակարգի ծանուցման վերոնշյալ կարգը կարող է չգործել:
4.	ԲԸԺ-ի օրակարգը ներառում է քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը, ինչպես նաև Խորհրդի կողմից ԲԸԺ-ի հաստատմանը ներկայացված աուդիտն իրականացնող անձի անունը:	ոչ	Լիազորություններն ԲԸԺ-ի կողմից վերապահված չեն խորհրդին
5.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա կարգով (օր. էլեկտրոնային քվեարկությամբ):	այո	Ընկերության կանոնադրության 8.2.10 կետ (գործնականում չի կիրառվում, քանի որ Ընկերությունն ունի մեկ բաժնետեր):
6.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում նշանակել ներկայացուցիչ:	այո	Ընկերության կանոնադրության 1.1, 6.1 և 6.3 կետեր:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
7.	Արդյո՞ք բաժնետերերը ԲԸԺ-ում քվեարկում են քվեաթերթիկների միջոցով: (Այս կարգը կարող է չգործել միայն մեկ բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում):	ոչ	Ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է:
8.	Արդյո՞ք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու ժողովի գումարումից մինչև 10 օր առաջ:	այո	
9.	Արդյո՞ք Խորհուրդը Ժողովի ժամանակ պատասխանել է բաժնետերերի հարցերին:	այո	
10.	Արդյո՞ք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալ Ժողովի ժամանակ:	այո	
11.	Արդյո՞ք Խորհուրդը պատասխանել է առաջադրված բոլոր հարցերին:	այո	
Շահութաբաժինների վճարման քաղաքականություն			
12.	Ընկերությունն ունի շահութաբաժինների վճարման քաղաքա-կանություն, որը մշակվել է խորհրդի կողմից, հաստատվել է ԲԸԺ-ում և հրապարակվել է Ընկերության ինտերնետային կայքում:	այո/ոչ	Շահութաբաժինների վճարման կարգն ու պայմանները սահմանված են ՀՀ Կառավարության 03.03.2011թ.-ի թիվ 202-Ն որոշմամբ:
13.	Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը ներառում է վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը (payout ratio):	ոչ	ՀՀ Կառավարության 03.03.2011թ.-ի թիվ 202-Ն որոշմամբ սահմանված «Շահութաբաժինների վճարման կարգն ու պայմանները» չեն ներառում այդ:
Պետությունը որպես սեփականատեր *[միայն Պետական ընկերությունների համար]*			
14.	Պետությունն արդյո՞ք չի միջամտում Պետական Ընկերության (ՊԸ) առօրյա ղեկավարմանը:	այո	Ընկերությունը հանդիսանում է առևտրային կազմակերպություն՝ փակ բաժնետիրական ընկերություն, և առօրյա ղեկավարումն իրականացվում է նրա գործադիր մարմինների կողմից:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
15.	Պետությունը հրապարակել է սեփականության քաղաքա-կանություն, որը սահմանում է պետական սեփականության ընդհանուր նպատակները, այն հատուկ նպատակները, որոնց պետք է հասնել, ինչպես նաև արդյո՞ք ընկերությունը ֆինանսա-վորվում է իր շահույթների հաշվին, թե ամբողջովին կամ մասնա-կիորեն ֆինանսավորվում է պետության կողմից:	ոչ	Ընկերությունն ամբողջովին ֆինանսավորվում է իր շահույթի հաշվին:
16.	Արդյո՞ք ՊԸ-ը մատուցում է այնպիսի ծառայություններ, որոնք, համաձայն պետական քաղաքականության, կարող են մատուցվել միայն պետական հատվածի կողմից:	ոչ	
Խորհուրդ			
17.	Ընկերությունը հիմնադրել է հստակ պարտականություններով և գործառույթներով օժտված խորհուրդ, որի մասին հրապարակ-ված է ընկերության ինտերնետային կայքում:	այո	
18.	Արդյո՞ք Խորհուրդը կազմում է հաշվետվություն Կանոնագրքի դրույթներին Ընկերության հետևելու վերաբերյալ:	ոչ	
19.	Արդյո՞ք Խորհուրդը նշանակում և ազատում է գործադիր մարմնի ղեկավարին, ինչպես նաև ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին (այդպիսին նախատեսված լինելու դեպքում), նշանակում և ազատում դրա անդամներին:	ոչ	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի 1-ին մասի 9) կետի և Ընկերության կանոնադրության 8.2.8 և 8.4.1 կետերի համաձայն նշված գործառույթը վերապահված է ընդհանուր ժողովին:
20.	Արդյո՞ք Խորհրդում ոչ գործադիր անդամները կազմում են մեծամասնություն, և արդյո՞ք նրանցից առնվազն երկուսն անկախ են:	այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
21.	Խորհրդի հանձնաժողովները տարեկան մեկ անգամ անցկացնում են Ընկերության ներքին կորպորատիվ փաստաթղթերի (կանոնադրություն, կանոնակարգեր և այլ)՝ իրենց իրավասության ոլորտին վերաբերող դրույթների փոխաքննություն և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում խորհրդին:	ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել:
22.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել:
23.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել:
Խորհրդի անդամների նշանակումը			
24.	Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին զուգակցված է առաջադրված թեկնածուի պաշտոնի նկարագրով և համառոտ կենսագրականով, որտեղ շարադրված են ստանձնելիք պարտականությունները, գործառույթները և կենսագրական տվյալները:	այո	
25.	Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագիրը ջնջել և համառոտ կենսագրականները հրապարակվել էն Ընկերության ինտերնետային կայքում՝ ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ:	ոչ	Խորհրդի անդամների համառոտ կենսագրականներն բերված են սույն հայտարարագրի նկարագրական մասում:
Խորհուրդ. Գործունեության մոնիթորինգ			

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
26.	Խորհուրդը, համաձայն գնահատման քաղաքականության, դիտարկում է գործադիր մարմնի գործունեությունը:	այո	Գործադիր մարմնի գործունեության գնահատումն իրականացվում է ըստ ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի No.1262-Ն որոշման պահանջների:
27.	Խորհուրդն իրականացնում է իր գործունեության արդյունավետության տարեկան գնահատում՝ համաձայն հաստատված գնահատման քաղաքականության:	ոչ	Խորհրդի գործունեության գնահատման քաղաքականություն դեռ չի հաստատվել:
Խորհրդի նիստերի հաճախելիություն			
28.	Խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության մասին տվյալները ներառված են ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում և/կամ ընկերության տարեկան հաշվետվությունում:	այո	
ՊԸ-ն Խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները			
29.	Արդյո՞ք ՊԸ-ն խորհրդի անդամները բացահայտում են քաղաքական միավորումներին իրենց անդամությունը:	այո	
30.	Այն քաղաքացիական ծառայողները, ովքեր ի պաշտոնե կարգավորիչ իրավասություններ ունեն տվյալ ՊԸ-ն նկատմամբ, արդյո՞ք ընդգրկվում են տվյալ ՊԸ-ն խորհրդի կազմում:	ոչ	
31.	Խորհրդի անդամները պետք է նշանակվեն և պաշտոնավարեն նվազագույնը 3 տարի, բացառությամբ եթե պաշտոնանկ են արվում կարգապահական խախտումների կամ պարտականությունների ոչ պատշաճ կատարման հիմքերով:	այո	
Խորհրդի անդամների վերաբերյալ տվյալները			
32.	Ինչպես պահանջվում է Կանոնագրքով, տարեկան հաշվետվությունը և/կամ ԿԿ հայտարարագրի նկարագրական մասը մանրամասն տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների մասին:	այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Խորհրդի նիստերի տարեկան պլան			
33.	Ցուցակված ընկերությունների և ՊԸ-ների խորհրդի նիստերը պետք է հրավիրվեն նվազագույնը եռամսյակը մեկ անգամ:	այո	
34.	Խորհրդի նիստերը գումարվում են համաձայն հաստատված տարեկան պլանի: Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին են ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:	այո	
Խորհրդի նախագահը			
35.	Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնները չեն համատեղվում:	այո	
36.	Ընկերության կանոնադրությամբ հստակ տարանջատված են Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի իրավասությունները:	այո	Ընկերության կանոնադրության 8.3.16-8.4.2 կետեր:
37.	Խորհրդի նախագահը պատասխանատու է, որպեսզի խորհրդի նորընտիր անդամներն իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ ծանուցվեն ընկերության և իրենց պարտականությունների մասին: Ընկերությունն ունի խորհրդի անդամների համար նախատեսված ուսուցման ծրագրեր:	1. այո 2. ոչ	խորհրդի անդամների համար ուսուցման ծրագրերի սահմանված չէ:
Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումը և նրանց ազատումը պատասխանատվությունից			
38.	Ընկերության կանոնադրությունը դրույթներ է պարունակում խորհրդի անդամներին այն վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ, որոնք վրա են հասել նրանց պաշտոնական պարտականությունների իրականացման հետևանքով: Ընկերությունն ապահովագրվել է Խորհրդի անդամների գործունեության վնասների ռիսկից:	ոչ	Կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Աուդիտի հանձնաժողով			
39.	Ընկերությունները պարտավոր են ստեղծել խորհրդի ոչ-գործադիր անդամներից բաղկացած աուդիտի հանձնաժողով, որտեղ մեծամասնությունը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահը պետք է լինեն անկախ:	ոչ	ՀՀ Կառավարության 31.05.2012թ.-ի թիվ 732-Ն որոշմամբ սահմանված է, որ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություններում (այսուհետ՝ ընկերություններ) ներքին աուդիտի համակարգի ներդրման օրվանից՝ այդ կազմակերպություններում վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների)՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 91-րդ հոդվածով սահմանված լիազորությունների կատարումը վերապահվում է ընկերությունների բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումներին:
40.	Աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամները համապատասխան որակավորում ունեն ֆինանսների, հաշվապահության, աուդիտի և ներքին հսկողության հարցերում:	ոչ	Ներքին աուդիտի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են “Ներքին աուդիտի մասին” ՀՀ օրենքով:
41.	Աուդիտի հանձնաժողովը հետևում է ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և ընկերության ֆինանսական գործունեությանը վերաբերող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայում եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և Խորհրդին ու ԲԸԺ-ին առաջարկություն ներկայացնում դրանց հաստատման վերաբերյալ:	ոչ	Այդ ֆունկցիան իրականացնում են ընկերության գործադիր մարմնին, արտաքին և ներքին աուդիտի պատասխանատուները:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
42.	Աուդիտի հանձնաժողովը նվազագույնը տարեկան մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը:	ոչ	
43.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է վերանայելու ընկերության ներքին վերահսկողության, ներքին աուդիտի, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգերը:	ոչ	Տես կետ 39:
44.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության, նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել խորհրդին, դրանք՝ ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար:	ոչ	Արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրությունը իրականացվում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով
45.	Աուդիտի հանձնաժողովը մշակել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախության չափորոշիչներ:	ոչ	Տես կետ 44:
46.	Աուդիտի հանձնաժողովը դիտարկել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը՝ համաձայն հաստատված չափորոշիչների, և արդյունքները ներառվել են տարեկան հաշվետվությունում:	ոչ	Տես կետ 44:
47.	Աուդիտի հանձնաժողովը պահում է իր նիստերի արձանագրությունները:	ոչ	
Ներքին աուդիտ			
48.	Ներքին աուդիտն իրականացնող անձը նշանակվում և ազատվում է Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ:	ոչ	Տես կետեր 39:
49.	Ներքին աուդիտն իրականացնող անձը անմիջականորեն հաշվետու է Աուդիտի հանձնաժողովին:	ոչ	Տես կետեր 39:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
50.	Ներքին աուդիտն իրականացնող անձն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Աուդիտի հանձնաժողովին:	ոչ	Տես կետ 39:
51.	Ներքին աուդիտն իրականացնող անձը պատասխանատու է ներքին հսկողության լիարժեքության դիտարկման և ներքին հսկողության ընթացակարգերի իրականացման համար:	ոչ	Տես կետ 39:
Արտաքին աուդիտ			
52.	Ընկերության արտաքին աուդիտ իրականացնող անձը չպետք է մատուցի Կանոնագրքի 28-րդ կետի 2) ենթակետի ոչ աու-դիտորական ծառայությունները:	այո	
53.	Արտաքին աուդիտ իրականացնող անձի վարձատրության չափը բացահայտվել և հաստատվել է ԲԸԺ-ում:	ոչ	Տես կետ.44
54.	Ընկերությունն ունի արտաքին աուդիտն իրականացնող անձի ռոտացիայի քաղաքականություն:	ոչ	Տես կետ.44
Խորհրդի այլ հանձնաժողովները			
55.	Ընկերությունը ստեղծել է Խորհրդի անդամներից բաղկացած այլ հանձնաժողովներ:	ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել:
56.	Խորհրդի բոլոր հանձնաժողովները գործում են համաձայն իրենց կանոնակարգերի, որտեղ սահմանվում են դրանց գործառույթ-ները, դերն ու պարտականությունները:	ոչ	Տես կետ 55:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
57.	Բանկի Խորհուրդը պետք է ստեղծի ռիսկերի կառավարման, ռազմավարական պլանավորման և ներդրումային հանձնաժողով-ներ՝ օժտված համապատասխան իրավասություններով:	ոչ	Ընկերությունը չի հանդիսանում բանկ:
58.	ՊԸ-ն խորհուրդը պետք է ունենա թեկնածությունների առաջադրման հանձնաժողով, որը հրավիրում է խորհրդի անդա-մության թեկնածուներին, սահմանում է խորհրդի անդամների պաշտոնի նկարագիրը, վերոնշյալ գործընթացի թափանցի-կությունը և անաչառությունը ապահովելու նպատակով իրա-կանացնում է գովազդային աշխատանքներ (այդ թվում՝ առաջադրման հանձնաժողովում ձևավորվում է թեկնածու-ների ընտրման հանձնախումբ՝ որտեղ ընդգրկվում են ՊԸ-ն խոր-հրդի նախագահը և գործադիր մարմնի ղեկավարը, և որը մշտա-պես գնահատում է թեկնածուներին՝ հիմնվելով նրանց փորձի և որակավորման, ինչպես նաև պաշտոնի նկարագրին նրանց համապատասխանության վրա:	ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել: Խորհրդի անդամների ընտրությունը և նշանակումը իրականացվում է ԲԸԺ-ի կողմից:
59.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել:
60.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ձևավորել:
Կորպորատիվ քարտուղար			

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
61.	Ընկերության խորհուրդը նշանակել է կորպորատիվ քարտուղար, որը հաշվետու է խորհրդին: Կորպորատիվ քարտուղարն աջակցում է խորհրդի նիստերի կազմակերպմանը, մասնավորապես նիստերի պլանավորմանը, հրավիրմանը, անցկացմանը և արձանագրության վարմանը՝ համաձայն օրենքների և ընկերության ընթացակարգերի: Խորհուրդը սահմանում է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը, ինչպես նաև նրա վարձատրության չափը:	այո	Խորհրդի քարտուղարին վարձատրություն չի սահմանվել:
62.	Կորպորատիվ քարտուղարն աջակցում է Խորհրդի նախագահին՝ դիտարկելու կորպորատիվ կառավարման ոլորտի ՀՀ օրենս-դրության, Կանոնագրքի, Ընկերության կանոնադրության և կանոնակարգերի պահանջները Ընկերության կողմից կատարելը:	այո	
Տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը			
Տարեկան հաշվետվություն			
63.	Ընկերությունը կազմել է հաշվետու տարվա տարեկան հաշվետվություն, որը ներկայացվել է բաժնետերերի հաստատմանը և հրապարակվել է ընկերության ինտերնետային կայքում:	այո	
64.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ֆինանսական հաշվետվություն՝ կազմված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:	այո	
65.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության շահառուներին հասցեագրված տեղեկատվություն, որը հնարավո-րություն է տալիս գնահատել ընկերության ներդրումը տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և բնապահ-պանական անվտանգության ապահովման գործում:	այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
66.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություն Ընկերության վարքագծի կանոնների վերաբերյալ և հղում ընկերության ինտերնետային կայքին, որտեղ այն տեղադրված է:	ոչ	Ընկերության վարքագծի կանոնները դեռ չեն հաստատվել:
67.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին:	ոչ	Ստանդարտի պահանջի բացակայություն
68.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ Ընկերության փոխկապակցված անձանց հետ կնքված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների մասին, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը՝ մանրամասն ներկայացնելով այդպիսի գործարքների հաստատման կամ վավերացման համար Ընկերության կողմից ընդունված քաղաքականությունը և ընթացակարգերը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև փոկապակցված այդպիսի գործարքների առկայության դեպքում նաև պետք է ներկայացնել Ընկերության գործարքներում փոխկապակցված անձանց գործարքների համամասնությունը, փոխկապակցված անձանց յուրաքանչյուր խմբի գործարքները, փոխկապակցված անձանց գործարքների պայմանների արդարության գնահատումը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքների բացակայության դեպքում պետք է հստակ նշվի այդ մասին:	այո	
69.	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:	այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
70.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը:	այո	Ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է:
71.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության փոխկապակցված անձանց ցուցակը և փոխկապակցված անձանց հետ կնքված այն գործարքների ցանկը, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը:	այո	
72.	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, այդ թվում անկախ անդամների անունները և հակիրճ կեն-սագրությունը, իմչպես նաև տարվա ընթացքում հրաժարական տված և պաշտոնից հեռացված խորհրդի անդամների անուն-ները, տարվա ընթացքում խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած բոլոր անձանց վարձատրության վերաբերյալ տվյալ-ները, ինչպես նաև խորհրդի նիստերին նրանց մասնակցության վերաբերյալ տվյալները:	այո	Տարեկան հաշվետվությունը ներառում է Խորհրդի անդամների անունները: Նշված մնացած տեղեկատվությունը ներկայացված է ԿԿ հայտարարագրում:
73.	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտ իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները:	այո/ոչ	Տարեկան հաշվետվությունը ներառում է միայն աուդիտ իրականացնող անձանց անունը:
74.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի նկարագրությունը, այդ թվում՝ դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, մայր ընկերության, ինչպես նաև քվեարկելու իրավունք տվող բաժնե-տոմսերի խաչաձև տնօրինումը փոխկապակցված այլ ընկերու-թյունների հետ:	այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
75.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, ռիսկային գործոնները, գալիք տարվա հեռանկարները, ընկերության ռազմավարությունը, տարվա ընթացում կնքված խոշոր գործարքները, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները, բացատրություն նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատած ֆինանսական արդյունքների կարևոր փոփոխությունների վերաբերյալ, շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում՝ շահութաբաժինների վճարման առաջարկությունները:	ոչ	Ըստ սահմանված կարգի, այդ հարցերով տնօրենը հաշվետվություն է ներկայացրել Խորհրդին:
76.	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը:	այո	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության հիմնական ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը՝ ներառյալ սոցիալական վճարները:
77.	Տարեկան հաշվետվությունը ներառում է թողարկված բաժնետոմսերի քանակը և դասը կամ դասերը, և արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքների ամփոփումը:	այո	
Ընկերության ինտերնետային կայքը			
78.	Ընկերությունն ունի ինտերնետային կայք, որտեղ առանձին բաժին նվիրված է կորպորատիվ կառավարմանը:	այո	Ընկերության ինտերնետային կայք՝ www.armats.am, կորպորատիվ քաղաքականություն և մարդկային ռեսուրսներ բաժին:
79.	Ընկերության ինտերնետային կայքը պետք է պարունակի վերջին 3 տարիների ԿԿ Հայտարարագրերը:	այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
80.	ՊԸ-ն պարտավոր է իր ինտերնետային կայքի միջոցով տեղեկացնել այն մասին, թե ինչպես է պետությունը պլանավորում մասնակցել Ընկերության կորպորատիվ կառավարմանը և ինչ ձևով է պատրաստվում իրականացնել սեփականատիրոջ իր քաղաքականությունը: ՊԸ-ը պարտավոր է իր ինտերնետային կայքում բացահայտել տեղեկատվություն իր գործունեության բոլոր այն ոլորտների մասին, որոնց վերաբերյալ որոշումների կայացումը չի կարող փոխանցվել Խորհրդին: ՊԸ-ը պարտավոր է իր ինտերնետային կայքի միջոցով տեղեկացնել այն մասին, թե արդյոք պետության քաղաքականության շրջանակում ընկերության գործունեությունը ենթակա է հատուկ կանոնակարգված վերահսկման և արդյոք այդ վերահսկողությունն իրականացվում է: ՊԸ-ն ինտերնետային կայքում պետք է նաև տեղեկություններ լինեն ՊԸ-ն խորհրդի գործունեության չափանիշների մասին: ՊԸ-ն պարտավոր է իր ինտերնետային կայքում հրապարակել շահառուներին վերաբերող ցանկացած նշանակալից տեղեկություններ:	այո	
81.	Ինտերնետային կայքը, կորպորատիվ կառավարման բաժինը և այնտեղ տեղադրված փաստաթղթերը հասանելի են նաև օտար լեզվով:	այո	Կայքը երկլեզվանի է՝ հայերեն/անգլերեն
82.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են ընկերության պետական գրանցման վկայականը և կանոնադրությունը՝ բոլոր գործող փոփոխություններով հանդերձ:	ոչ	Անհրաժեշտության բացակայություն

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
83.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժինը տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների և գործադիր մարմնի վերաբերյալ՝ ներառելով նրանց համառոտ կենսագրականները և պաշտոնի նկարագրերը:	այո	
84.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի, խորհրդի հանձնաժողովների Կանոնակարգերը և կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:	ոչ	
85.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է խորհրդի տարեկան գնահատման քաղաքականությունը:	ոչ	
86.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են նախորդ 5 տարիների ԲԸԺ-երի նիստերի արձանագրությունները:	ոչ	
87.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը:	ոչ	
88.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է Ընկերության կառուցվածքը և բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը:	այո	
89.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են Ընկերության նախորդ 3 տարիների տարեկան հաշվետվությունները:	այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Միայն Պետական ընկերությունների համար			
90.	ՊԸ-ում պետությունը ներկայացնող պետական մարմինը Տարեկան հաշվետվությունում/ինտերնետային կայքում բացահայտել է Ընկերությանը տրամադրված որևէ պետական օգնության, սուբսիդիաների, դրամաշնորհների, ինչպես նաև պարտավորությունների մասին տեղեկությունները: Անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, ղեկավարի անունը, ազգանունը, ինչպես նաև ուղղակի և անուղղակի ձևով պետությանը պատկանող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառվեն տարեկան հաշվետվությունում և բացահայտվեն ՊԸ-ն ինտերնետային կայքում:	այո	Անհրաժեշտ տեղեկատվությունը ներկայացված է հրապարակված տարեկան հաշվետվությունում:
Վարքագծի կանոններ			
91.	Ընկերությունը ընդունել է վարքագծի կանոններ:	ոչ	Ընկերության վարքագծի կանոններ դեռ չեն հաստատվել:
92.	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում կորպորատիվ արժեքների, գործարար վարքագծի, պետության և պաշտոնատար անձանց հետ հարաբերությունների, ինչպես նաև մրցակիցների հետ հարաբերությունների մասին:	ոչ	Տես կետ.89
93.	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում «ահազանգումների», վարքագծի կանոնների խախտման, ինչպես նաև այդ խախտումների մասին հաղորդելիս գաղտնիության պահպանման մասին:	ոչ	Տես կետ.89
94.	Ընկերությունը նշանակել է պաշտոնյա, ով պատասխանատու է վարքագծի կանոններին հետևելու մոնիթորինգի համար:	ոչ	Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները հետևում են կանոնների պահպանման համար, իսկ խախտումներ հայտնաբերելիս պարտավոր են գրավոր հայտնել այդ մասին գլխավոր տնօրենին:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Կանոնադրական կապիտալի ավելացումը			
95.	Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումների մասին Խորհուրդը անհապաղ տեղեկացրել է բոլոր բաժնետերերին:	ոչ	Հաշվետու տարում Ընկերության կանոնադրական կապիտալը չի ավելացվել
Շահառուներ			
96.	Խորհուրդը սահմանել է այն շահառուների շրջանակը, որոնք համապատասխանում են ընկերության գործունեությանը, օրինական շահեր և սպասելիքներ ունեն Ընկերությունից:	ոչ	Ընկերությունը շահառուների շրջանակ չի սահմանել:
97.	Ընկերությունը ընդունել է քաղաքականություն՝ միտված շահառուների շահերը և սպասելիքները հաշվի առնելուն:	ոչ	Ընկերությունը շահառուների շրջանակ չի սահմանել:
98.	Խորհուրդը մշակել և բացահայտել է շահառուների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը և տարեկան կտրվածքով բացահայտում է դրանց իրականացումը:	ոչ	Ընկերությունը շահառուների շրջանակ չի սահմանել:
99.	Շահառուների համար հասանելի են ընկերության ինտերնետային կայքի՝ տարեկան հաշվետվություններին և կորպորատիվ կառավարմանը վերաբերող բաժինները:	այո	
Միայն Պետական ընկերությունների համար			
100	Պետական սեփականության քաղաքականությունը ճանաչում է Ընկերության պատասխանատվությունը շահառուների առջև:	ոչ	Ընկերությունը շահառուների շրջանակ չի սահմանել:
101.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է բաժին՝ շահառուների հետ սեփականության քաղաքականության իրականացման վերաբերյալ:	ոչ	Ընկերությունը շահառուների շրջանակ չի սահմանել: